ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատ համայնք
0236- 6-22-36, 093-407-713 hhovtashat@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 նոյեմբերի 2019 թվականի N 28-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, համայնքի

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 11 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳԸ

1. ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. 2020թ-ի ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ « ՇՈՒՇԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ
3. ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1.Ալեքսանյան Արզուման
2.Բադալյան Նամեստ
3.Մարտիրոսյան Մուրադ
4.Եգորյան Գագիկ
5.Առաքելյան Հայկ
6.Հովհաննիսյան Գոռ
7.Հովհաննիսյան Հայկ
8.Մխիթարյան Քերոբ
9. Ասատրյան Արման

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատ համայնք
0236- 6-22-36, 093-407-713 hhovtashat@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

29 նոյեմբերի 2019 թվականի N 29-Ն

ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 18 կետի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածների պահանջներով համայնքի ավագանին որոշում է.

**1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատ համայնքում 2020թ-ի համար սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.**

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ.

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ.

-1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ.

-3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ:

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ 2500 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ 100000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 30000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 25000 դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3500 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6500 դրամ.

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ.

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12500 դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3500 դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ.

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6500 դրամ.

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ.

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12500 դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար 175 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 125000 դրամ.

դ. խաղատների համար՝ 250000 դրամ.

ե. շահումով խաղերի համար՝ 125000 դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ 50000 դրամ.

10) համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ.

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500 դրամ.

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ.

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ.

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ.

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ.

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8500 դրամ.

11) ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1750դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 750դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000 դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 250000 դրամ:

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1250000 դրամ.

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 դրամ.

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 3500000 դրամ.

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 դրամ:

**2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատ համայնքում 2020թ-ի համար սահմանել տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը.**

1) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարություն փաստագրելու համար , մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման համար վճար սահմանել 10 000դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 10 000դրամ

3) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում, անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար, մատուցման ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5 000դրամ

4) Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 3 000դրամ

5) Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 7000դրամ

6) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար 500 դրամ փոխհատուցման վճար.

7)համայնքի կողմից բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝

- ամսական 80 դրամ

բ.ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 դրամ.

8) ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա.առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 դրամ.

բ.հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 դրամ.

գ.վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 (տասնհինգ) դրամ.

դ.գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 3 (երեք) դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 8 (ութ) դրամ.

ե.արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 (հինգ) դրամ.

զ.շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն 1-ին կետի 8-րդ ենթակետի «ա-ից ե» պարբերություններով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 1-ին կետի 8-րդ ենթակետի «ա-ից ե» պարբերություններով սահմանված դրույքաչափով.

է.շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 1-ին կետի 8-րդ ենթակետի «ա-ից ե» պարբերություններով սահմանված դրույքաչափով:

9) շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 (հիսուն) դրամ:

10)շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

11) ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետի «ա»-ից «ե» պարբերություններով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3 000 (երեք հազար) դրամ, կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10 000 (տասը հազար) դրամ.

գ.ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի և (կամ) շինության սեփականատերը անհամաձայնության մասին գրավոր ներկայացնում է համայնքի ղեկավարին կամ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնող անձանց (համայնքային հիմնարկ կամ օպերատոր)՝ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

12)սույն որոշման 1-ին մասի 8-րդ ենթակետով սահմանված շենքերի, շինությունների և տարածքների մասով աղբի հեռացման հարաբերությունները կարգավորվում են աղբահանության ծառայություն մատուցող և ստացող կողմերի միջև կնքված պայմանագրով:

13) սահմանել համայնքի տարածքում անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների առաջարկվող ցանկը և գնացուցակը՝

ա/ Կենդանիների հիվանդությունների բուժման ,կանխարգելման հարցերով խորհրդատվություն - 500 դրամ

բ/ Ծննդօգնություն

գ/ թեթև միջամտություն - 1000 դրամ

դ/ ծանր միջամտություն - 5000 դրամ

ե/ Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում կախված կենդանուտեսակից /բացառությամբ <<գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների/ - 100 դրամ/ մանր կենդ./ - 200 դրամ /խոշոր կենդ./

զ/ Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար - 200 դրամ

է/ Ախտահանություն -1քառ. մետր 200 դրամ

ը/ միջատազերծում / դեզինսեկցիա/ - 1քառ. մետր 100 դրամ

թ/ Կրծողների ոչնչացում / դեռատիզացիա / - 1 քառ. մետր 200 դրամ

ժ/ Արհեստական սերմնավորում -5000 դրամ

ի/ Կենդանու հերձում - 1000 դրամ / մանր կենդ./ – 3000 դրամ / խոշոր կենդ./

լ/ Կենդանուբուժում /յուր. այցելություն/ -1000 դրամ

խ/ Կենդանիների նախասպանդային զննում -1000 դրամ/ մանր կենդ./ - 2000 դրամ / խոշոր կենդ./

ծ/ Կենդանիների հետսպանդային զննում /մինչև 2018թ. հուլիս/ -1000դրամ/ մանր կենդ./ 2000/դրամ/խոշոր կենդ/

14) Սույն որոշման 1-ին կետին կիրառված է 0.5 գործակից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1.Ալեքսանյան Արզուման կողմ

2.Բաղալյան Նամեստ կողմ

3.Մարտիրոսյան Մուրադ կողմ

4.Եգորյան Գագիկ կողմ

5.Առաքելյան Հայկ կողմ

6.Հովհաննիսյան Գոռ կողմ

7.Հովհաննիսյան Հայկ կողմ

8.Մխիթարյան Քերոբ

9. Ասատրյան Արման կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատ համայնք
0236- 6-22-36, 093-407-713 hhovtashat@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

29 նոյեմբերի 2019 թվականի N 30-Ն

2020թ-ի ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ << ՇՈՒՇԱՆ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության << Տեղական Ինքնակառավարման մասին>> Օրենքի 18-րդ հոդվածի 11 և 28 կետերի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

ՀԱՍՏԱՏԵԼ 2020թ-ի ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ << ՇՈՒՇԱՆ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ / ըստ հավելված 1-ի/

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Ալեքսանյան Արզուման կողմ
2. Բադալյան Նամեստ կողմ
3. Մարտիրոսյան Մուրադ կողմ
4. Եգորյան Գագիկ կողմ
5. Առաքելյան Հայկ կողմ
6. Հովհաննիսյան Գոռ կողմ
7. Հովհաննիսյան Հայկ կողմ
8. Մխիթարյան Քերոբ
9. Ասատրյան Արման կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

հավելված 1
29 նոյեմբերի 2019 թվականի N 30-Ն որոշման

1. Հովտաշատ համայնքի ղեկավարի աշխատավարձը 300 000 /երեք հարյուր հազար / ՀՀ դրամ:
2. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը 13

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ |
|---|---|---|
| *ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ* | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | *224 000* |
| *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ* | | |
| Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | *244 950* |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ/3.1-1/,/3.1-2/ | 2 | *220 000* |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ/3.2-1/,/3.2-2/ | 2 | *198 000* |
| Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ/3.3-1/ | 1 | *178 000* |
| *ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ* | | |
| Օպերատոր | 1 | 140 000 |
| Պահակ | 1 | 73800 |
| Գործավար | 1 | *155 000* |
| *Հավաքարար* | 1 | *79 100* |
| *Անասնաբույժ* | 1 | *103 000* |

*ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ*

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | *ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)* |
|---|---|---|
| Մշակույթի տան տնօրեն | 1 | 160 000 |
| Մշակույթի տան հավաքարար | 1 | 73 800 |

## ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԴՐՈՒՅՔԱՃԱՓԸ | Հաստիքային միավորը | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| Մանկապարտեզի տնօրեն | 1 | 1 | 165 000 |
| Մեթոդիստ ուս.գծով տնօրենի տեղակալ | 1 | 1 | 95000 |
| Մանկապարտեզի դաստիարակ | 1,25 | 4 | 126 600 |
| Դաստիարակի օգնական | 1 | 4 | 90 000 |
| Երաժիշտ | 1 | 1 | 85000 |
| Բուժքույր | 0,75 | 1 | 100 000 |
| Հաշվապահ | 0,5 | 1 | 160 000 |
| Տնտեսվար | 0,5 | 1 | 158 200 |
| Խոհարար | 1 | 1 | 90 000 |
| Խոհարարի օգնական | 1 | 1 | 85 000 |
| Պահակ | 1 | 1 | 73800 |
| Հնոցապան | 1 | 1 | 73800 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատ համայնք
0236- 6-22-36, 093-407-713 hhovtashat@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

29 նոյեմբերի 2019 թվականի N 31-Ա

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հովտաշատ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարին Հովտաշատ համայնքի սեփականություն համարվող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գինը ըստ կադաստրային արժեքի՝ 100% չափով, համաձայն հավելված 2-ի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Ալեքսանյան Արզուման
2. Բադալյան Նամեստ
3. Մարտիրոսյան Մուրադ
4. Եգորյան Գագիկ
5. Առաքելյան Հայկ
6. Հովհաննիսյան Գոռ
7. Հովհաննիսյան Հայկ
8. Մխիթարյան Քերոբ
9. Ասատրյան Արման

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված 2

Հովտաշատ համայնքի ավագանու <<29 նոյեմբերի 2019թ. N 11 նիստի N 31-Ա որոշման

| Համար | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /հա/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը /հազար դրամ/ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հողամաս | Տ.Մեծի 1 | 03-054-0282-0052 | 0,09077 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 479.266 | չկան |
| 2 | Հողամաս | Տ.Մեծի 3 | 03-054-0282-051 | 0,10489 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 553.820 | չկան |
| 3 | Հողամաս | Տ.Մեծի 5 | 03-054-0282-0041 | 0,09627 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 508.306 | չկան |
| 4 | Հողամաս | Տ.Մեծի 7 | 03-054-0282-0039 | 0,09627 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 508.306 | չկան |
| 5 | Հողամաս | Տ.Մեծի 9 | 03-054-0282-0038 | 0,09627 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 508.306 | չկան |
| 6 | Հողամաս | Տ.Մեծի 11 | 03-054-0282-0040 | 0,09626 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 508.253 | չկան |
| 7 | Հողամաս | Տ.Մեծի 13 | 03-054-0282-0050 | 0,09626 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 508.253 | չկան |
| 8 | Հողամաս | Տ.Մեծի 15 | 03-054-0282-0047 | 0,09625 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 508.200 | չկան |
| 9 | Հողամաս | Շահումյան46 | 03-054-0282-0048 | 0,11297 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 596.482 | չկան |
| 10 | Հողամաս | Շահումյան48 | 03-054-0282-0043 | 0,10765 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 568.400 | չկան |
| 11 | Հողամաս | Փ.Շիշիկյան1 | 03-054-0282-0023 | 0,10749 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 567.548 | չկան |
| 12 | Հողամաս | Փ.Շիշիկյան2 | 03-054-0282-0018 | 0.11821 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 624.150 | չկան |
| 13 | Հողամաս | Փ.Շիշիկյան3 | 03-054-0282-0024 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |
| 14 | Հողամաս | Փ.Շիշիկյան4 | 03-054-0282-0020 | 0.10483 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 553.503 | չկան |
| 15 | Հողամաս | Փ.Շիշիկյան5 | 03-054-0282-0016 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |
| 16 | Հողամաս | Փ.Շիշիկյան6 | 03-054-0282-0021 | 0.09625 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 508.200 | չկան |
| 17 | Հողամաս | Փ.Շիշիկյան7 | 03-054-0282-0015 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |
| 18 | Հողամաս | Փ.Շիշիկյան8 | 03-054-0282-0022 | 0.09625 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 508.200 | չկան |
| 19 | Հողամաս | Փ.Շիշիկյան9 | 03-054-0282-0013 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |
| 20 | Հողամաս | Փ.Շիշիկյան10 | 03-054-0282-0011 | 0.09625 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 508.200 | չկան |
| 21 | Հողամաս | Փ.Շիշիկյան11 | 03-054-0282-0004 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |
| 22 | Հողամաս | Փ.Շիշիկյան12 | 03-054-0282-0010 | 0.09625 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 508.200 | չկան |
| 23 | Հողամաս | Փ.Շիշիկյան13 | 03-054-0282-0003 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |
| 24 | Հողամաս | Փ.Շիշիկյան14 | 03-054-0282-0012 | 0.09625 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 508.200 | չկան |
| 25 | Հողամաս | Փ.Շիշիկյան15 | 03-054-0282-0017 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |
| 26 | Հողամաս | Փ.Շիշիկյան16 | 03-054-0282-0005 | 0.09625 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 508.200 | չկան |
| 27 | Հողամաս | Փ.Շիշիկյան17 | 03-054-0282-0026 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |
| 28 | Հողամաս | Փ.Շիշիկյան18 | 03-054-0282-0025 | 0.11534 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 608.100 | չկան |
| 29 | Հողամաս | Փ.Շիշիկյան19 | 03-054-0282-0014 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |
| 30 | Հողամաս | Փ.Շիշիկյան21 | 03-054-0282-0019 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |
| 31 | Հողամաս | Մ.Մելքոնյան1 | 03-054-0282-0042 | 0.1045 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 551.760 | չկան |
| 32 | Հողամաս | Մ.Մելքոնյան3 | 03-054-0282-0044 | 0.10338 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 545.850 | չկան |
| 33 | Հողամաս | Մ.Մելքոնյան5 | 03-054-0282-0046 | 0.11621 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 613.590 | չկան |
| 34 | Հողամաս | Ա.Խնկոյան1 | 03-054-0282-0032 | 0.1121 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 591.890 | չկան |
| 35 | Հողամաս | Ա.Խնկոյան2 | 03-054-0282-0035 | 0.10478 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 553.240 | չկան |
| 36 | Հողամաս | Ա.Խնկոյան3 | 03-054-0282-0006 | 0.1119 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 590.840 | չկան |
| 37 | Հողամաս | Ա.Խնկոյան4 | 03-054-0282-0037 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |
| 38 | Հողամաս | Ա.Խնկոյան5 | 03-054-0282-0036 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |
| 39 | Հողամաս | Ա.Խնկոյան6 | 03-054-0282-0007 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |
| 40 | Հողամաս | Ա.Խնկոյան8 | 03-054-0282-0031 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 41 | Հողամաս | Ա.Խնկոյան10 | 03-054-0282-0033 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |
| 42 | Հողամաս | Ա.Խնկոյան12 | 03-054-0282-0027 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |
| 43 | Հողամաս | Ա.Խնկոյան14 | 03-054-0282-0009 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |
| 44 | Հողամաս | Ա.Խնկոյան16 | 03-054-0282-0030 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |
| 45 | Հողամաս | Ա.Խնկոյան18 | 03-054-0282-0029 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |
| 46 | Հողամաս | Ա.Խնկոյան20 | 03-054-0282-0028 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |
| 47 | Հողամաս | Ա.Խնկոյան22 | 03-054-0282-0034 | 0.095 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.600 | չկան |
| 48 | Հողամաս | Ա.Խնկոյան24 | 03-054-0282-0008 | 0.12761 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 673.790 | չկան |
| 49 | Հողամաս | Գ.Նժդեհի2 | 03-054-0282-0049 | 0.11071 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 584.550 | չկան |
| 50 | Հողամաս | Գ.Նժդեհի4 | 03-054-0282-0045 | 0.09498 | բնակ. | բնակ.կառուցապատ. | 501.500 | չկան |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ